



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

491.99 -8  
U-44

3204

{ 90 }

2010

491. 59 - 82  
4-44

Գ. Ը Ա Յ Ե Ա Խ Ց

Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Մ Ա Յ Բ Ե Ն Ի Լ Ե Զ Ի Ւ

Ա Խ Ա Հ Ա Խ Ա

Ա Յ Բ Բ Ե Ն Ա Ր Ա Ն

Տ Ա Մ Վ Ե Ե Կ Ի Թ Ա Բ Ռ Ո Ր Դ Ե Ր Ա Գ



Դ ի ն ն է 25 կ ո պ է լ ի

1901

Թ ի ֆ լ ի ս

Տ պ ա ր ա ն Ա . Վ . ա ր դ ա ն ե ա ն ց ի , Ա հ լ ա մ ի ն ո վ ա կ ի փ ո ղ . № 7 .  
Տ ի ո գ ր ա ֆ Ա . Վ ա ր տ ա ն ց , Վ ե լ յ ա մ ի ն ո վ ա կ ի փ ո ղ . № 7 .

12002

491.99-8  
Q-44

428  
6-ԱՀ

Գ. ԱՊՐԵԼԻ 3

784

ՈՒՍՈՒՄՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶԻՒ

ԱԹԱԶԻՆ ԳԻՐՔ

ԱՅԲԱԵՆԱՐԱՆ

ՏԱՄԱՅՈԹ ՆԵՐՈՐԴ ՏԻՎ

5  
5  
9  
1  
8



"Gulliver,  
Gulliver,  
 trench my  
 shoe."



1901

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Վարդանեանցի, Վելիամինովսկի փող. № 7.

Տիպոգրիայ Մ. Վարդանյան, Վելյամինովսկայ ալ. № 7.

11848

1774813

821  
512

ԳՈՒՅԱ ՓՐԵԳՈՒՅԱ ԱՎԵԼՈՒՅԱ

ՔԱՐ ԱՎԵԼՈՒՅԱ

ՅԱՆԱՋԱՂԱՅ

Дозволено Цензурою Тифлисъ, 22-го Августа 1901 г.



**արտ**

տատ տար արտ.

**մարտ**

մարտ, մատ, տամ, ատամ, արամ.

**մարտը**

մարտը, տատը, մատը, արտը, արամ.

մարտը տալիս է

**լիս է**

տալ, լալ, էլ, սէլ, իմ, սիմ, միս, մաս,  
էր, սէր, տէր, սար, սալ, լար, սիրտ,  
ամիս, սամի, սարի, տարի, մարի, մասիս,  
մասրի, մատիս, մարիսմ.

Ապ—բի—լը կա—պոյտ մա—նու—շակ.

պ. չու. ոյ.

պապ, պաս, պատ, կապ, ուր, ում, ուլ.

էշ, շուն, ուշ, շուտ, նուշ, կոյս, լոյս, ծոյլ.  
կատու, կաշի, շամամ, մաշիկ, Արշակ.

կապած, անկապ, պանիր, կապոյտ, Ղուկաս.

Ապրիլը տալիս է կապոյտ մանուշակ.

Մանուշակը կապոյտ ծաղիկ է:

Կապոյտ մանուշակը ծաղկում է ապրիլին:

Ապրիլին ծաղկում է կապոյտ մանուշակը:

ա. է. լ. ի. ու. ոյ.

լ. ծ. կ. ձ. դ. ն. շ. պ. ս. տ. ր. ւ.

ս. է. լ. ի.

լ. ծ. կ. զ. շ. Մ. ի. ն. ձ. գ. ս. օ. թ. ր.



Մարտը ամիս է:

Մի ամիս է մարտը:

Մասիսը սար է:

Արամ, արի, մի մատիտ տամ:

Մարիամ, արի, իմ մատիտը տար:

Մարտը տալիս է ձնծաղիկ:

## ՃՆԾԱՂԻԿ

Ճի, ինձ, տանձ, սանձ, սալ, ծամ, ծիտ, ծիծ,  
սան, նան, տակ, տիկ, կէս, մէկ, համ, կալ,  
լակ, կար, նալ, նամ, աղ, տաղ, մաղ, ծաղիկ,  
կաղին, իլիկ, կաղնի, կարաս, Մինաս.

Մարտը ձնծաղիկ է տալիս:

Մարտ ամիսը ձնծաղիկ է տալիս:

Ձնծաղիկը մարտին կըլինի:

Մարտ ամսին ձնծաղիկ կըլինի:

ա. է. լ. ի.

մ. լ. տ. ձ. ն. կ. դ. ծ. լ. ս.  
ս. է. լ. ի. Մ. ր. օ. շ. ն. զ. գ. թ. լ. ս.

**Մայիսին բացւումէ վարդը.**

*wj. g. q. q. p.*

*այս, այդ, այն, բայց, բան, բոյս, բաց.*

*լաց, ցուրտ, զա, զու, զաս, սարդ.*

*պաղ, պաշ, պար, պուշ, սայլ, մայլ, այծ,*

**այսպէս, այդպէս, վայրի:** նախաք

Վարդը մայիսին է բացւում:

Մայիսին վարդը բացւում է:

**Կարմիր վարդը բացւում է մայիսին:**

*m. t. p. h. m. n. w.*

*P. q. t. d. k. s. n. z. w. u. q. m. p. g. r.*

*b. t. l. b. q. 2. q. m. i. d.*

— 1 —



## Սոխակը երգում է անուշակ

*n, b, q, h.*

*սով, ծով, կով, բովս, խավ, խաղ, խամ.*

Խուլ, մուխ, մեխ, սեխ, ղեղ, զիր, զոմ. գոյն, զայլ, զող, զող, տող, ցեղ, ցեխ.

## ԳԵՂԱՄ, ԳՐԻՎՈՐ, ԳԵՐԻ, ԽԱԽԱԼ, ԽԱղող.

## Սովորական անուշ՝ է երգում:

Սոխակի Երզր շատ անուշ է:

միկրո գլուխութեանը մասնաւութեանը ուղարկ

*որ, որպէս, որդի, ուկի, որբ, որդ, որու-  
կաւ, խաւ, լաւ, ցաւ, նաւ.*



Յունիսը մեղիսոտ է տալիս,  
Իսկ յուլիսը առատ ցորեն:

J. q. n.

մեղ, ձեղ, եղ, խող, զոխ, զարդ, պարզ.

ոռու, ոռոմբ, կեռ, տառ, բառ.

յայտնի, յանկարծ, յատուկ, յիսուն, Յիսուս.

լեզու, զաղան, զանգակ, ռամիկ, ռեղին.

Յունիսն ու յուլիսը առատ ամիսներ են:  
Ամառն ամեն բան առատ է լինում.  
Ամառն անտառ, ձմեռ՝ դաշտ:

ա. ե. է. ը. ի. ո. ու. ոյ. այ.

բ. դ. դ. դ. լ. իս. ծ. կ. ձ. դ. մ. յ. ն. շ. պ.  
ռ. ս. վ. տ. ր. ց. ւ.

Ա. ե. է. ը. ի. ո.  
Բ. Գ. Դ. Զ. Լ. Խ. Ծ. Կ. Զ. Ղ. Մ. Յ. Ե. Ջ. Պ. Գ. Ո.  
Ս. Վ. Տ. Բ. Ց. Ի.


Օգոստոսը տանձ ու խնձոր լիժնեմաքմբ  
եւ ուրիշ շատ հասուն մրգեր:

օ. և. հ. հ. մ. մասսախոփ

օր, օղ, օղ, օձ, տօն, հօր, մօր.

Օգոստոսին համում են շատ մրգեր:  
Ես այդ ամսին իմ հօր հետ գնում են այզի:

Մեպտեմբերը մեղ տալիս է  
Խաղողի բոլոր տեսակը:  
Հոկտեմբերը կարմիր զինի,  
Նոյեմբերը — բողկն ու տակը:



Դեկտեմբերին ձին է գալիս, վասուրք  
Յունարին ծածկում անը ու ձոր,  
Փետրարին սկսում է  
Փոփոխակի ցուրտ ու տաք օր:

իւ, փ. ք.

ձին, սին, իւր, իւղ, գիւղ, շիւղ.

փակ, փոս, փառք քար, քոյր, քեզ, գիրք.

արին, հարիւր, փափուկ, քաղաք.

Չինը դեկտեմբերին է գալիս.  
Նոյեմբերին էլ է ձին գալիս:  
Մարերումը ձին շատ է գալիս:  
Յունարին շատ ցուրտ է լինում:



Ահա այսպէս բոլոր տարին դպէ  
Թաւալւում է չորս շրջանում.  
Այս պատճառով չորս ժամանակ  
Չորս եղանակ է մեզ բերում:

թ. չ. ճ. գ.

թաթ, թութ, ճիթ, չեշ, ճաթ, ճութ, ճաղ.

մաճ, ճաշ, ժամ, թէթ, խեժ, ժախ, ժեռ.

ջանք, ջուխտ, սաջ, քաջ, լանջ, ունջ. մունջ.

թանաք, ճանաչ, ջաղաց, ժառանգ, շամիչ.

թիւ, լրիւ, հաշիւ, տիւ, խստիւ.

ծոյլը պատժի արժանի է:

Ճրագն իր տակին լոյս չի տալ:

Ինչ որ անես, առաջդ կըգայ:

Արած լաւութիւնը չի կորչիլ:

**ՄԵՐ ՊԱՍՊԱՏՈՒՆ ԱՇԱԿԵՐՄԻՆԵՐԻ**

**ԱՆՈՒՆՆԵՐԸ:**

Ժամանակ սուս, բառածուս ով  
Քորանակներ եա չ խամայք սպուշ

**Տիգրան Արամեանց.**

**Արտէնիկ Գուրզէնեանց.**

**Յարուժիսն Յովսէփեանց.**

**Գրիգոր Միքայէլեանց.**

**Դանիէլ Խարայէլեանց.**

**Յովհաննէս Մարկոսեանց.**

**Միմէոն Եսայէեանց.**

**Աշխէն Հայկազունի.**

**Եղիսաբէթ Արծրունի.**

**Հայկանուշ Աղայեանց.**

**Վարսենիկ Հահնազարեանց.**

**Գրեցէք ձեր և ձեր ընկերների անուն-**  
**ներն ու ազգանունները:**



**Ջ, անձայն**

**Տղայ, երեխայ, ընծայ, հսկայ, աըբայ, ճանպայ, օրւայ,**  
**տարւայ...**

(նա) գայ, տայ, լայ, կայ, գնայ, մնայ, աղայ, կարդայ,  
իմանայ, մոռանայ, ուշանայ, խնդայ, ուրախանայ,  
հիւանդանայ, տկարանայ, հասկանայ լաւանայ...

(Ես) եկայ, իմացայ, մոռացայ, ուշացայ, ստացայ,  
հասկացայ, ուրախացայ, վեր կացայ, վայր եկայ,  
կերայ, կշտացայ...

**Կիսաձայնաւոր,**

հայ, վայ, չայ վիայ նոյ, հայր, մայր, վայր, ծայր,  
գայլ, սայլ, վիայլ, այլ, բայց, այծ, լոյս, բոյս, կոյս,  
ծոյլ, թոյլ, նշոյլ ..

**Բաղաձայն.**

յոյս, յոյն, յարդ, յարդ, յարկ, յիշատակ, յիշել, յան-  
կարծ, յայտնի, յատակ...

**Վերացած.**

սա, դա, նա, սրա, զրա, նրա, (դու) ասա՛, աղա՛, արա՛,  
կարդա՛, խնդա՛, գնա՛, մնա՛, (օտար բառեր և յատուկ  
անուններ) խաթա, բալա, մաշա, բօշա, ուստա, Յու-  
դա, Երեմիա, Իտայիս...

**ՀԱՅՆԱԿՈՐՆԵՐ**

ա. ե. է. լ. ի. ո. ն.  
իւ. եա. եօ.

բռլոր լրի լամ  
**ԲՈԼՈՐ ԱԳԻՐ** ամասնի ամանել  
 ա. բ. գ. դ. ե. զ. է. լ. թ. ժ. ի. լ. իւ. ծ.  
 կ. հ. ձ. դ. ճ. յ. ն. չ. ո. չ. պ. ջ. ո. ս.  
 փ. տ. ր. ց. ւ. փ. ք. հ. օ. ֆ.

---

**Գ Լ Խ Ա Գ Ի Բ**

Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Լ. Ը. Թ. Ժ. Ի. Խ. Ծ. Կ. Չ.  
 Զ. Դ. Ա. Մ. Ց. Ն. Ջ. Ո. Զ. Պ. Ա. Վ. Պ. Տ. Բ.  
 Յ. Ի. Փ. Ք. Օ. Ֆ.

---

**Ե Ա Ղ Կ Ա Գ Ի Բ**

Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Լ. Ը. Թ. Ժ. Ի. Խ. Ծ. Կ. Չ.  
 Հ. Զ. Ղ. Ճ. Մ. Ց. Ց. Ե. Շ. Ո. Զ. Պ. Ա. Վ. Վ. Տ.  
 Բ. Ց. Ի. Փ. Ք. Օ. Ֆ.

---

**Ճ Ղ Ա Գ Ի Բ**

ա բ գ դ ե զ է լ թ ի խ ծ կ հ ա ն  
 մ յ և լ ն չ պ չ ն ս վ տ ր ց ւ փ ք օ ֆ

**Թ Ա Հ Ն Ի Կ Ա Բ**

**Ա ղ ո ւ ն ա կ**

Ղ Ռ ւ - Ղ Ռ ւ - Ղ Ռ ւ,  
 Ա - Ղ Ռ ւ - Ղ Ռ ւ,  
 Ն ա կ, Ն ա կ,  
 Ա - ղ ո ւ - ն ա կ,  
 Թ ը ռ ո ռ ո ռ ...


**Կ ա շ ա ղ ա կ**

Հ ա շ ա շ ա շ,  
 Կ ա շ ա շ ա շ,  
 Ղ ա կ, Ղ ա կ,  
 Կ ա շ ա ղ ա կ,  
 Թ ը ռ ո ռ ո ռ ...

**Ծ ի տ ի կ**


Ծ ի տ ե մ, ծ ի տ ե մ,  
 Ծ ը լ ը լ ո ւ մ ե մ,  
 Ճ ի կ, ճ ի կ, ճ ի կ,

Ոստոստում եմ,  
Թլրչկոտում եմ,  
Տիշ, տիշ, տիշ.  
Արի, թիմիկ,  
Արի, փետրիկ,  
Որ ես դառնամ  
Փոքրիկ ծիտիկ,  
Փոքրիկ ծիտիկ,  
Գիծիկ միծիկ,  
Թըռոռո...



2 n p u b q w ū w ḥ

Մարտը տալիս է ձնծաղիկ,  
Սպըթիլը կապոյտ մանուշակ;  
Մայխսին բացւում է վարդը,  
Սոխակը երգում անուշակ:  
Յունիսը մեզ խոտ է տալիս,  
Խոկ յուլիսը առատ ցորեն,  
Օգոստոսը տահճ ու խնձոր,  
Եւ ուրիշ շատ հասուն մրգեր:  
Սեպտեմբերը մեզ տալիս է  
Խաղողի բոլոը տեսակը,  
Հոկտեմբերը կարմիր գինին,  
Նոյեմբերը բողկն ու տակը:  
Դիկտեմբերին ձիւն է զալիս,  
Յունւարին ծածկում սար ու ձոր  
Փետրւարին սկսում է  
Փոփոխակի ցուրտ ու տաք օր:  
Անա այսպէս բոլոր տարին  
Թաւալւում է չորս շրջանում,  
Եյս պատճառով չորս ժամանակ,  
Չորս եղանակ է մեզ բերում:






**Աքաղաղ**  
 Աքաղաղը կանչում է.  
**Ճուղրուղու,**  
 Ղու—ղու—ղու:  
**Պառաւ** նանը զարթնում է.  
 Տա—տա—տա.  
 Պա—պա—պա:  
 Աքլար, ինչու կանչեցիր,  
 Ինչու նանին զարթեցրիր.  
 Այս դու—դու, այ ջու—ջու:  
 \*  
 Այս նանի, ջան նանի,  
 Մեղ մի վեր կացընի.  
 Թոնդ մի քիշ էլ մնանք,  
 Քնից լաւ կշտանանք:

**Աքլարը** շուտ է կանչում.  
**Աքլարը** քեղ է խարում.  
**Աքլար,** ինչու կանչեցիր.  
 Ինչու նանին զարթեցրիր.  
 Այս դու—դու,  
 Այ ջու—ջու:  
 Առաջի հայուսոց է նաև բարձր զայտի  
 դորոշ—մարդկանց ու է նաև բարձր բայի  
 մու լուն պայ մայ մարտի ու  
**Առաջու** մայ մարտի ու լուն մայ  
 Արեգակը դուրս է եկել մայ մայ  
 մայ մայ մայ Պատարալով ուն  
 զողը հերթից ներս է ընկել  
 զողշողալով.  
**Ճիտը** ծառին կը կը շում է  
 ծըլւըլալով.  
**Չորոմն** առուն քը քը շում է  
 կը քը շում.  
**Ճոյլ** տղայի քունն է տարել  
 Խը լը լիմի ալով.  
 Տը իները շուննէ տարել  
 Մը լոմլուալով:

Լուսացաւ

Լուսացաւ, լուսացաւ, լուսն է բարին,  
ծիսն է ծառին, համն է թառին։ Աշխատա-  
տը, վեր կաց բանի, ծոյլ տղայի քումը տանի։

Ինչո՞ւ աքլարը կանգնած է բակում, պինդ-  
պինդ կանչում է իր կուկուրիկուն։ — Էնդուր  
որ վաղուց արևն է ծագել, բայց ծոյլ երե-  
խան քնից չի զարթել։ Դեռ չի վեր կացել,  
աղօթքն արել, դպրոցի դասը վեռ չի սովո-  
րել։ Կանչում է աքլարն իր կուկուրիկուն,  
տղայոց պարտը միտներն է ձգում։



Ծեծւած գառնիկ

— Ինչի՞ կուլաս դու, գառնիկ։  
«Խիստ ծեծ կերայ ես, մայրիկ։  
— Քեզ ո՞վ ծեծեց, իմ գառնիկ։  
«Մէկ չար պառաւ, ախ, մայրիկ։  
— Ինչի՞ ծեծեց քեզ, գառնիկ։  
«Ծառի տակն էի, մայրիկ։  
— Ինչո՞վ ծեծեց քեզ, գառնիկ։  
«Մեծ մահակով, ոհ, մայրիկ։  
— Ո՞րտեղիդ զարկեց, գառնիկ։  
«Ոտիկներիս, ուհ, մայրիկ։  
— Ի՞նչպէս լացիր դու, գառնիկ։  
«Մէ... մէ... մէ... մայրիկ։



Ծիտը բևե բաղէն

Ծիտը ծառին ծրբւլումէ. Աւու —  
ծիւ, ծիւ, ծիւ: Բաղէն գլխին պտըսումէ. Ի՞նչ —  
կու, վու, վու Կայա ԱՄ»  
Ծիտը լոեց, ծիտը վախեց. Աւու —  
Վայ, վայ, վայ: Ասա՞»  
Բաղէ, թրոռ. բաղէ թրոռ. Աւու —  
Հայ, հայ, հայ: Ասա՞»  
Բաղէն թռաւար բժրմաց՞ն —  
Բաղէն փախաւ, Այդեմքնամ  
Ի՞նչ լաւ էլաւ,  
Հէ, հէ, հէ: ԱՄ»  
Ծիտիկ-միտիկ, պիծիկ-միծիկ,  
Պըտպըտուրիկ, շըլպըտուրիկ,  
Դու լաւ պըծար չար բաղէի  
Սուր ճանկերից, հա, հա, հա:



Հարսի հաշիւը

Երկուշաբթի հաց կըթխեմ, Երեքշաբթի  
լոշ կըթրջեմ, չորեքշաբթի լըւացք կանեմ,  
հինգշաբթի կար կըկարեմ, ուրբաթ օրը պատ  
կըկենամ, շաբաթ օրը ժամ կըգնամ, լոյս  
կիրակի փոանց-փոանց՝ կըզարդարիմ, կեր-  
թամ հօրանց:

Ս լ ե

Արև, արև, եկ, եկ, այս ի՞ւ ամ  
Զիզի քարին վէր եկ.  
Սեսև ամպեր, հեռացէք,  
Արևին ճամպա տրէք.  
Թողէք զա զայ մեղ մօտ,  
Դրա լոյսին ենք կարօտ:  
Կարմիր արև, եկ, եկ, ամ —  
Նախշուն քարին վէր եկ:  
Արեք յաղթեց ամպերին,  
Ճողքը ձգեց սարերին.  
Զիզի քարը, տես, տես,  
Պսպղում է ոսկու պէս.  
Սիրուն արև, միշտ եկ,  
Զիզի քարին վէր եկ:

**Հ Ե Ք Ի Ա Շ**  
 Զմեռն էր. գիշերը երկար:  
 Գիւլազ տատը՝ գլուխը քուրսու վրայ  
 դրած, ննջում էր:

Երեխէքը վրայ թափւեցին, քունը փախ-  
 ցրին, որ իրենց համար մի հէքիաթ ասի:  
 Նա էլ սկսեց.

«Էլել է չի էլել՝ մի սիրուն արտուտիկ:  
 Կտուցը սուր՝ մեր Արշակի քթի նման:  
 Բմբուլը խուճում՝ Տիգրանի մազերի նման:  
 Թևերը փափլիկ՝ զողիկի կոների նման: Ահա  
 այսպէս սիրուն էր արտուտիկը:

— Բա ինձ նման ոչինչ չունէ՞ր, ասեց  
 Վանին:

— Բա ինձ, ձայն տրւաւ Հոփիսիկը:  
 — Ինձ էլ չասեցիր, տանտի, լաց էլաւ  
 նազիկը:

— Սպասեցէք, սպասեցէք, երէխէք, դեռ  
 չեմ վերջացրել, ամենքիզ էլ բաժին կըտամ,  
 ասեց տատը և շարունակեց.

— Յափ «Աչիկներն այնպէս նախշունաէին, — ինչ-  
 պէս Վանիկի աշքերը: Կատարն այնպէս կարմիր էր, ինչպէս  
 Հոփիսիկի թշերը: Ոտներն այնպէս բարակ էին, ինչպէս  
 Նազիկի մատները:

— Ես ոտները չեմ ուզում, ասեց նա-  
 զիկը:

— Լաւ, ոտներ չեմ ասիլ. տոտիկները  
 կուզե՞ս:

— 2եմ ուզում, ես տոտիկներն էլ չեմ  
 ուզում:

— Բա ինչը կուզես, նազիկ.

— Ես աչիկներն եմ ուզում.

— Աչիկներն ինձ է տրւել տատը, քեզ  
 չեմ տալ, գոչեց Վանին:

— Նազիկ, կուզե՞ս կատարը դու վեր  
 առ, տոտիկները ես կըվերցնեմ, ասեց Հոփի-  
 սիկը:

— 2եմ ուզում, ես աչիկներն եմ ուզում:

— Վանի, զու կատարը վերցրու, ես տո-  
 տիկները, իակ նազիկը՝ աչիկները:

— Ի՞նչ եմ անում կատարը, տատը ում  
 ինչ որ տրւել է, այն է նրանը:

— Ձշմարիտականասում Վանին, ամեն կողմից գոչեցին երեխէքը։ Այդօքան վկանք ունի նազիկը գոհոչըմսաց, ունե վէճը երկար շարունակեց։ Բայց տատը չէր լսում, ինա գլուխը դրել է ըստարձին քնել։ Եկէ չէին կարող զարթեցնել։ Վեր կացան իրանք էլ մտան տեղերը։

2.

Միւս երեկոյին երեխէքը էլի հաւաքւեցին տատի մօտ, որ շարունակի հէքիաթը։ Նա էլ սկսեց.

,Անցած զարնանը մեր պարտիզի ծառի վրայ մի սիրուն կրկու կար։ Ես նստած էի ծառի տակին, և զաք մէկ-մէկ եկաք ինձ մօտ։

Երբ որ Արշակը ներս մտաւ, կրկուն կանչեց՝ կո՛ւ—կո՛ւ։

Եկաւ Ծողիկը, ասեց՝ պո՛ւ—պո՛ւ։

Եկաւ Տիգրանը, ասեց՝ տո՛ւ— տո՛ւ։

Եկաւ Վանին, ասեց՝ զո՛ւ—զո՛ւ։

Եկաւ Հոփիոփիկը, ասեց՝ բո՛ւ— բո՛ւ։

Եկաւ Նազիկը, կրկուն էլ ոչինչ շասեց, թուալ զնաց…

— Օ՛իս, օ՛իս, նազիկ, օ՛իս, օ՛իս, կրկուն քեզ համար ոչինչ չի ասել, — միաբերան ձայն տըւին երեխէքը։

\*  
նարար զայ ձօձ մնացաւ, թէ ինչու կրկուն իր համար ոչինչ չի ասել, և սկսեց լաց լինել։ Տատը նրան ասեց.

— Նազիկ, գիտե՞ս ինչու կրկուն քեզ համար բան շասեց, նա վախեց քեզ բան ասել։ Ինչ որ ասէր, դու շպիտի հաւանէիր, ուրիշն էլ իրանը քեզ չէր տալու, ինչպէս անցած երեկոյին։

— Տատի ջան, տատի, որ մէկ էլ կրկուն զայ, ասա ինձ համար էլ մէկ բան ասի, աղաչեց նազիկը, և նրանից յետոյ շատ խելօրացաւ։



ԱՆՏԱՌԻ ՄԱՆՈՒԿԸ —  
Հայոց լինում պատահ քեզ  
Աղջամանդ սիրու պահ

Անտառի խորքում մի ճօճ կար կապած  
և նրա մէջը մի մանուկ դրած:

Լաց էր լինում մանուկը:

Մայր չըկար մօտը, որ ծիծ տար, հայր  
չըկար՝ որ պահպանէր:

Անտառումը մարդ չկար:

Մի գթոտ պախրակով կաթնալից կըրծ-  
քով եկաւ ճօճի մօտ իր հորթուկի հետ և  
տխուր ձայնով երեխին ասեց.

Սիրուն երեխայ, որբ ես մնացել.  
Քո անբախտ մօրը գերի են տարել.  
Նա գնաց, կորաւ, էլ յետ չի գալու,  
էլ ոչ մի անգամ քեզ ծիծ չի տալու:  
Նա քեզ փաթաթեց լայն տերեներով,  
Ճօճի մէջ կապեց նանիկ» ասելով,  
Նա լաց էր լինում աղի արցունքով,  
Իր վերջին նանիկն ասում էր լալով.

«Նանա՛, բալիկս, նանա՛,  
Մեծատերև թաթաշոր,  
Մանրատերև ոտաշոր.

Քամին կանի, ժաժ կըտայ,  
Պախրէն կըգայ, ծիծ կըտայ,  
Նանա՛, զառնուկս, նանա՛:  
Ահա եկել եմ, որ քեզ ծիծ տամ ես,  
Պահեմ, պահպանեմ իմ հորթուկի պէս:

2.

Պախրան ծիծ տրւաւ երեխին:  
Երեխան կշտացաւ ու քնեց: Պախրան իր  
հորթը թողեց երեխի մօտ, իսկ ինքը գնաց  
արածելու, որ կաթը շատացնի և երկուսին  
էլ ծիծ տայ:

Հորթը մնաց երեխի մօտ, օրօրեց նրան  
և նանիկ ասեց.

Նանա՛, մանկիկս, նանա՛.  
Իմ մայըլ քո մօր նման չի,  
Ամեն խոտից կծիլ չի,  
Ամեն զըից խմիլ չի,  
Ամեն տափի նստիլ չի:  
Նա սարէսար ման կըգայ,  
Որբ կըգտնի, ծիծ կըտայ.  
Նանա՛, մանկիկս, նանա՛:

3.

Պախրան կուրծը լիքը յետ դարձաւ  
արօտատեղից և ծիծ տրւաւ երեխին էլ,  
հորթին էլ:

Ով որ տարով կը մեծանայ, մեր երեխան  
օրով մեծացաւ: Չափ չանցաւ, նա դուրս  
եկաւ ճօճիցը. մի օր չորեքթաթ տըւաւ,  
միւս օրը տոքի կանգնեց: Մի քանի անգամ  
սլկընաց, վէր ընկաւ, բայց շուտով ամրա-  
ցաւ և սկսեց պախրի հետեւից վազվրդել:

4.

Մի թագաւորի որդի չէր լինում: Երա-  
զումն ասացին. «Թագաւոր, Աստած քեզ  
մի որդի պիտի տայ անտառի խորքումը»:

Մէկ անգամ անգաւակ թագաւորը որսի  
գնաց իր որսորդների հետ:

Հատ ման եկան, ոչինչ չըգտան, ոչ մի  
որս չըպատահեց նրանց:

Բայց որ հասան անտառի խորքը, այն-  
տեղ մի պախրի հետք գտան և նրա մօտ  
երեխի ոտնատեղեր:


Ամենքը մնացին գարմացած և չէին հա-  
ւատում, որ երեխի կը լինի ոտնատեղերը, բայց  
թագաւորն իսկոյն յիշեց իր երազը և հրա-  
մայեց որսորդներին, որ երեխի հետքը քշեն,  
և ուր որ լինի, զտնեն նրան:

Որսորդները գնացին, և երկու ժամ չան-

ցած՝ մի ոկրուն տղայ բերին թագաւորի  
մօտ և պատմեցին, թէ ինչպէս գտան նրան  
պախրի ծիծը ծծելիս:

Թագաւորը շատ ուրախացաւ: Երեխին  
գրկեց, համբուրեց և անունը դրաւ: Պախ-  
րատուր:

Պախրատուրը մեծացաւ թագաւորի պա-  
լատումը, լաւ ուսում առաւ, վերջը գառաւ  
թագաւոր և մեծ զօրքով գնաց, իր մօրն  
ազատեց զերութիւնից:



**Ճ օ լ ի (արևաբեր).**

Ճօլի, ճօլի, ճօլ չըկայ,  
Խաւիծ անեմ, եղ չըկայ,  
Ճօլին ընկել է ծովը,  
Ծովիցը հանող չըկայ:  
Չըկան բերէք, դուրս հանենք,  
Թոկ բերէք, կցան անենք,  
Չու բերէք, թաթին դնենք,  
Եղ բերէք, վարսը քսենք:  
Խովիլ պատումն է ժանգոտել,  
Զեիշը տափումն է ժանգոտել,  
Կանաչ դաշտերին ենք կարօտ,  
Կարմիր արևին ենք կարօտ:

**Նուրի (անձրևաբեր).**

Նուրին, նուրին եկել է,  
Աջբա չուրին եկել է,  
Ճիլա շապիկ հագել է,  
Կարմիր զտիկ կապել է.  
Եղ բերէք, վարսը քսենք,  
Զուր բերէք, գլխին ածենք,  
Մեր նուրինի փայը տրւէք,  
Ուտենք, խմենք, քեփ անենք:

**Որբի պահողն Աստած է:**

Փայլուն արևը արդէն մայր մտաւ,  
Լուսինն էլ վաղուց գնաց, թաք կացաւ.  
Գիշերւայ մութը աշխարհս պատեց  
Եւ աշնանային ցուրտ քամին փշեց:  
Ամեն մարդ քաշւեց, իր տունը մտաւ.  
Ամեն երեխայ մօր գիրկն ընկաւ.  
Միայն մի խեղճ որբ, որ չունէր հայր, մայր,  
Ոչ մի ազգական, ոչ քոյր, ոչ եղբայր,  
Ոտքերը բորիկ, տկլոր ու քաղցած,  
Մի տան պատի տակ մնաց կուշ եկած:  
Բարի տանտէրը վերնից նայեց,  
Մեր թշւառ որբին ներս հրաւիրեց,  
Եւ այնուհետև տարաբախտ տղան  
Ունէր իր համար տէր ու տիրական:

**Ա ն ձ ր ի**

Անձրի, անձրի, ցած արի.  
Բըսցուը ցորեն ու դարի.  
Բըսցուը ծաղիկ, կանաչ խոտ,  
Աւէ փոշի, մաքրէ օդ:  
Անձրի, անձրի, ցած արի,  
Դարդ ամենուս բարի:

Ծննդեան երգ

Ալէլուիա, ալէլուիա:  
Քրօրհնէքը ճրազլուսով,  
Զատիկը՝ արևուսով:  
Թէ քնած էք, վեր զարթեցէք,  
Թէ զարթոն էք, լաւ լսեցէք:


Մարիամ եկաւ լալով լալով,  
Լալով լալով, մղկըտալով.  
Լուսաթաթախ մանուկ ծնեց,  
Ծով ու ցամաք լուսով պատեց:

Չեր տունըն է չորեքսիւնի,  
Չորս սիւներից ո՞րն է սալի \*).  
Սալը չարակամի սրտին,  
Սպրի բարեկամի որդին:  
Տունըշէն, տունըշէն.  
Չեր տղայոց անունն ի՞նչ է.  
— Հայկ ու Արամ է.

Դրանք նստեն մէկ սեղանի,  
Գինի խմեն նախջրւանի,

\*) Սալ. տափակ քար \*

Չեր թշնամուն գետը տանի,  
Գայլագուաւը աչքը հանի.  
Մէկ պոչատ հաւ, մէկ ըստիլ: \*) Եղ  
Տըէք՝ ալէլուիան տանի:



Ուտելիք և խմելիք.

Մարզը ուտում է, խմում է, կրծում է,  
ծծում է, խըպլշտում է, կուլ է տալիս, լամ-  
լամում է: Գինին խմում են, իսկ քացախը  
ուտում են իրան գլխու կամ կերակուրի մէջ:  
Կաթը բրթում ուտում են իրան գլխու և  
թէյի հետ խմում են: Երեխան ծծում է մօր  
կաթը: Մսաջուրը, խաշոն, շորտան թանէ-

\*) Բստիլ=գըւանիքա=մէկ ֆունտ.

սալասը, վիթրուկը, մարխոխը, ուտամը են և  
խրպշում են: Միան աւտում են, իսկ ոսկորը  
կրծում: Դեղը խմում են, եթէ ջրի է, իսկ  
դեղահատերը կրւէ են տալիս: Պինդ կերա-  
կուրներն ուտելիս ծամում են, բայց ատամ  
չունեցողները լամլամում են: Մաստակը ծա-  
մում են որոճող ուղտի նման: Ճռնը լակում  
է, լափում է:

Գ դ ա լ - Փ ո դ.

Ամառն էր: Հունձն ընկել էր: Մէկ լո-  
ռեցի և մէկ աշտարակցի միասին հունձ էին  
անում: Ճաշի ժամանակ նրանց համար մա-  
ծուն բերին մի մեծ մաթրաթով, բայց երկու  
գդալի տեղ մէկն էին բերել:

Երբոր մածնի բրթուճը պատրաստեցին,  
աշտարկցին ասեց.

—Գդալը մէկ հատ է. արի զդալ-փոխ  
անենք, զդալ-փոխ ուտենք:

Լոռեցին չըհամաձայնեց, ասեց.

—Թո՞ղ ես զդալով ուտեմ, դու ձեռով կեր:

—Ո՞չ, պատասխանեց աշտարակցին:  
Որովհետեւ զդալ-փոխ չես ուղում, արի մէկ

բան ասեմ, այնպէս անենք: Ով որ մեզանից  
եօթը զիւղի անուն տայ վրայ վրայ, շուտ-  
շուտ, զդալով նա ուտի:

—Լաւ, առաջ ես կասեմ, ասեց լոռեցին  
ու սկսեց:

—Հիշ, Լօ...ոի, հիշ, Ու...զում...րար...

Լոռեցին միայն երկու զիւղի անուն  
տրւաւ, այն էլ չկարողացաւ շուտ-շուտ ասել  
ու սուս կացաւ. Յետոյ աշտարակցին սկսեց,  
և կարկուտի պէս վրայ տրւաւ.


Ուշի — Ուշական

Փարպի — Բիւրական

Թալին — Թալիշ — Մաստարա,

Գդալի պոչը դէմն արա:

Ասեց ու զդալն առաւ լոռեցու ձեռքիցը:  
Լոռեցու բերանը մնաց բաց, բայց էլ ինչ  
կարող էր անել. խաղը տանուլ էր տրւէլ...



### Շուտասելուկներ.

1. Ուսուցիչն ուսուցչին ասեց սնուցիչ  
Մնուցիչը մնուցին ասեց ուսուցիչ:
2. Ծափ ճուտը ճմբան ծերին ճիտը ծուռ:
3. Ակնակապ Ակոր ապէր դու ինձ համար  
մի ջուխտ ակը կապի ես քեզ ասեմ քեզ  
արքայութիւն ակնակապ Ակոր ապէր:



Խելօք գլուխը.

- Բերանն ասեց. ես ամեն ինչ կուտեմ,  
կըխմեմ:
- Գլուխն ասեց. հըմ:
- Չեռքն ասեց. ես ամեն ինչ կըշինեմ,  
կըքանդեմ:
- Գլուխն ասեց. հըմ:
- Լեզուն ասեց. ես ինչ ուզեմ՝ կասեմ,  
կըպատմեմ:
- Գլուխն ասեց. հըմ:

Ոտքն ասեց. ես ամեն տեղ կերթամ,  
ման կըգամ:

Գլուխն ասեց. հըմ:

Բերանն ու ձեռքը, լեզուն ու ոտքը  
ասացին զլիմին.

Ինչո՞ւ ես „հըմ“ անում:

Գլուխը պատախանեց.

— Ի՞նչ անէք-չանէք, առաջ ինձ պիտի  
հարցնէք:

Բերանը մնաց բաց, իսկ լեզուն կըմ-  
կըմալով ասեց.

— Հա... ըղըղորդ, ըղըղորդ է ասում  
գըզըզըլուխը...

Ոտքով ման եմ զալիս,

Չեռքով աշխատում,

Աչքով տեսնում եմ,

Ականջով լսում.

Իսկ իմ չարն ու բարին,

Իմ լաւն ու վատը

Ո՞վ է իմանում.

— Խելօք զլուխս:

Հինգ ղգայարանք մաս մզում  
ես աշքով տեսնում եմ, հարցը մաս  
Ականջով լսում, մաս մասով  
Քթով հոտ եմ առնում,  
Լեզով ճաշակում.  
Իսկ ցուրտն ու տաքը,  
Կոշտն ու կակուղը  
Ինչով եմ զգում:  
— Բոլոր մարմնովս եմ շօշափում:

Արհեստ ընտրող մանուկը  
Թորոսի որդին մի ծոյլ տղայ էր, ոչ  
գիր էր սովորում և ոչ մի արհեստ:  
— Ի՞նչ արհեստ սովորեմ. — վնթիքն-  
թում էր նա. — կլեկութիւնը շատ լաւ ար-  
հեստ է, բայց բորիկ ոտքով, ամանում կանգ-  
նել, արագ սլտրտել, դա այնքան հեշտ չէ:  
Աւելի հեշտ է փուքսի փշելը, բայց այդ իմ  
ձեռքում երկար չեն թողնիլ. Վարպետ էլ  
դառնամ, ի՞նչ եմ անելու, պէտք է մաս-  
ներով փոքր ինչ բամբակով տաք-տաք  
պղնձին նաշաղիր քսեմ, ձեռքերս այրեմ:  
2Է, այդ իմ բան չէ:

— Գարբնի մօտ կերթամ. այնտեղ էլ  
փուքս կայ, ձմեռն էլ տաք է, բայց մեծ ուժ  
պէտք է այդ գործի համար. Ահազին մուր-  
ճով երկաթը ծեծել, որ նա տափակի, — ես  
այդ չեմ անիլ, ինչ կուզի լինի.

— Նալբանդը լաւ է: Մեխի ծայր սրել  
և պայտեր շտկել, այդ շատ դժւար չէ.  
բայց մէկ ամեհի ձիու ոտք բոնել, ծնկանը  
դնել — երկիւզալի է. ձիու արացին իմ ըն-  
կերների ապտակից թունդ է: 2Է, իմ կար-  
ծիքով դա լաւ արհեստ չէ:

Դերձակութիւնը մաքուր արհեստ է, լաւ  
միտս ընկաւ: Բայց ի՞նչ եմ ասում, ամբողջ  
օրերով ծալպատիկ նստել, զլուխ քաշ զցած  
կարել ու կարել, ոչ խաղալ կընի և ոչ  
վաղվըգել: 2Է, դա էլ բան չէ.

— Ինչու չըգնամ, որմնաղիր դառնամ,  
բարձր պատերի ծայրերին կանգնեմ, այն-  
տեղից կանչեմ. — քար ու կիր տըւէք,  
աղիւս ձգեցէք: Այսպէս կըգոռամ և կը-  
հրամայեմ, որ աշխարհը տեսնի, թէ ես  
վարպետ եմ, գործս լաւ գիտեմ: Բայց վայ  
թէ յանկարծ այդ բարձր տեղից ոտքս սլկընի

և թրմիալով ներքեւ գլորտի՛մ: 2է, այդ հեշտ  
կործ չէ և ոչ իմ բանն է:  
— Երևի չկայ այնպիսի արհեստ. որ ես  
հաւանեմ, զնամ սովորեմ: Թէ հիւմն դառ-  
նամ, ոտքս կըկտրեմ. կօշկակար լառնամ,  
ձեռքս կըծակեմ. ոսկերիշ դառնամ, մատ-  
ներս կայրեմ. թէ բրուտ դառնամ, ցեխ  
պիտի կոխ տամ. վարժարան զնամ, գիր  
պիտի սովորեմ: 2է իմ կարծիքով, ամենից  
լաւ է ոչինչ չըշինեմ, ոչինչ չըսովորեմ:  
Բայց այնուհետև ես ի՞նչ կըդառնամ:



### Ծոյլաղիկ

Բանն ի՞նչ կանեմ, կեղտոտ է,  
Բամբակը կորիզոտ է.

**Մետաքս պիտի որ մանեմ,**

**Մաստակ պիտի որ ծամեմ,**

Կտերը տիտիկ\*) անեմ,

Անցնողին մտիկ անեմ.

**Ուտեմ, խմեմ,**

**Մթնիր, քնեմ:**

### Առածներ

Իմացողին մին, չիմացողին հազար ու  
մին: — Իմացողին մէկ ասա, չիմացողին հա-  
կաց, հա ասա. — Սկին սապոնն ինչ անի,  
խևին խրատն ինչ անի: — Ով որ երգի ամա-  
ռը, նա պար կըզայ ձմեռը. — Մի բաժակ  
ջուր, ով ուզի՝ տուր: — Էսօրւայ փուշը էզուց-  
ւայ նուշը: — Հացն ուտելով, բանն անելով:  
Ապրել կայ՝ երկաթ է, ապրել կայ՝ արծաթ է:  
Զըւի գողը ձիու գող կըդառնայ: Տաշած քարը  
գետնին չի մնալ: Ծերանաս, ծերի պատիւն  
իմանաս: Կուշտը քաղցածին մանր կըբրթի:  
\*) Կտերը տիտիկ անել — կտրին նստել:

## Ուլերն ու գայլը

Հինում է, չի լինում մի այծ։ Այս այծն անտառում իրան համար տուն է շինում և իր փոքրիկ ուլերի հետ բնակում է նրա մէջ։ Ամեն առաւօտ այծը դուրս է գնում արածելու։ Գնալուց առաջ նա ասում է իր ձագերին։ «Որդիք, դռները փակեցէք, հանդիստ կացէք և դրսից ով էլ դալու լինի, դուռը բաց չանէք»։ Ասում է ու գնում։ Դաշտումը լաւ արածելուց, կուրծը կաթով լցնելուց յետոյ այծը տուն է դալիս։ Տահ դռները փակ են։ Նա պողերով դուռը ծեծում է ու կանչում։

«Զալիկ-մալիկ ուլիկներ,  
Զալ-պլտուրիկ այծիկներ,  
Ելէք, բացէք տան դուռը,  
Պատրաստ է ձեր ապուրը»։

Ուլերը բաց են անում դուռը։ Մայրը ծիծ է տալիս նրանց և կրկին գնում արածելու։ Այս ամենը տեսնում ու լսում է գայլը։ Նա մտքումը զնում է, որ խարելով ներս մտնէ ուլերի փարախը, երբ մայրն այնտեղ չլինի։ Մի օր, երբ այծը դուրսն է լինում, գայլը կամաց-կամաց դալիս է, թաթով դուանը խփում է ու կանչում։

«Զալիկ մալիկ ուլիկներ,  
Զալ-պլտուրիկ այծիկներ,  
Ելէք, բացէք տան դուռը,  
Պատրաստ է ձեր ապուրը»։

Ուլերը մի լաւ ականջ են զնում նրանք հասկանում են, որ դուռը թըխ-թըխսկացնողն իրանց մայրը

չէ, և պատասխանում են։ «Իու մեր մայրը չես, կորիք-հեռացիք այդտեղից, մեր մայրը բարակ ձայնով ու քաղցը է մկըկում, դուռն էլ արդգերով է ծեծում։ Ասում են ու դուռը բաց չեն անում։ Դայլը թողնում հեռանում է։ Փոքը ժամանակից յետոյ դալիս է մայրը։ Նա գովամ է ուլերին, որ դուռը բաց չեն արել։ — Դուք շատ լաւ էք արել, որդիք, ո՞ր դուռը բաց չէք արել, թէ չէ նա ձեզ ամենքիդ էլ կուտէր։

## Պառաւն ու այծը

Կար շըկար երբեմն  
Մի աղքատ պառակիկ,  
Ունէր մեր պառաւը  
Կաթնատու այծիկ։  
Զալիկ մալիկ,  
Կաթնատու այծիկ։

Պառաւը ձմեռը  
Այծիկը պահեց,  
Իր բերնի պատառը  
Նըրա հետ կիսեց։

Միրով յօժար  
Նըրա հետ կիսեց  
Երբ ձիւնը հալւեցաւ,  
Բըսաւ կանաչ խոտ։

Պառաւն իւր այծիկը  
Դուրս տարաւ արօտ։  
Ուրախ-զըւարիք  
Դուրս տարաւ արօտ։

Թանձը մառախուղը գետինը պատեց.  
Պառաւի առջևից այծը կորցըեց.  
Սփառս, ափառս,  
Այծը կորցըեց:  
Պառաւը լաց էլաւ, իսկ գայլը օռնաց,  
Մոլորած այծիկը բարձը մրկըկաց.  
Մըկըկ, մըկըկ,  
Այծը մրկըկաց:


Գայլն իսկոյն մօտեցաւ, այծին շալակեց.  
Պառաւը ետեից բարձրաձայն դոչեց  
«Հայ-հայ, վայ-վայ»:  
Բարձրաձայն դոչեց:

Խեղճը մնաց կանգնած, մի փունջ լսուտ ձեռին:  
Անմիտիթար ձայնով կանչելով այծին.  
«Ե՞կ, — Եկ, Եկ, — Եկ»:  
Կանչելով այծին:



Ճանիր, մանիր, իմ ճախարակ,  
Մանիր սիպտակ մալանչներ,  
Մանիր թելեր հաստ ու բարակ,  
Որ ես հոգամ իմ ցաւեր:  
Զէթ եմ ածել ականջները,  
Նոր շինել եմ շրտրւիկ,  
Դէհ, շուտ շարժիր լայն թևերը,  
Ոստեր շինիր սըրուլիկ:  
Մանիր մանիր իմ ճախարակ,  
Լիսեռնիկդ պտրտիր,  
Մանիր թելեր հաստ ու բարակ,  
Իլկիդ վրայ փաթաթիր:  
Տիգրանիկս զուլբա չունի,  
Հանդ է գնում ոտարաց.  
Գաբրիէլս շուխա չունի,  
Միշտ անում է սուգ ու լաց:  
Մանիր, մանիր, իմ ճախարակ,  
Մանիր սիպտակ փաթիլներ,  
Մանիր թելեր հաստ ու բարակ,  
Որ ես հոգամ իմ ցաւեր:  
Զըւալ չունինք, շաթու չունինք,  
Ոչ սամոտէն, ոչ պարան,

Այսպէս ազքատ դեռ եղած չենք,  
Կտրուել է ամեն բան:  
Դեռ հարա էի, որ գործեցի,  
Քանի կարպետ, խալիշա,  
Բայց դրանցից շուտ գրկեցի,  
Հիմա շունիմ մի քեշա:  
Կարմիր օրս երբ սևացաւ,  
Եւ պարտք մնաց թէն քիչ,  
Պարտատիրոջ սիրտն էլ սևաւ,  
Եկաւ տարաւ ամեն ինչ:  
Մանիր, մանիր, իմ ճախարակ,  
Մանիր սիպտակ քուլաներ,  
Մանիր թելեր հաստ ու բարակ,  
Որ ես հոգամ իմ ցաւեր:



Հազ վն ամ քանե լուկա նեմրան զի  
այս զարդ վն որ անում բայց առն մայ  
Օհանն ու Վանին հանելուկներ էին ա-  
սում: Ինչ որ մէկն ասում էր, միւսը գտնում  
էր: Վերջը Օհանն ասեց:

— Այն ի՞նչ է. „Տակը քար է, քար չէ.  
Գլուխը քար է, քար չէ. Խոտ կուտի, կով  
չէ. ձու կածի, հաւ չէ“:

Վանին շատ մտածեց, շատ բանի ա-  
նուն տըւաւ, չեղաւ, չըգտաւ: Յետոյ ասեց.  
Հեմ գտնում, ասա տեսնեմ ինչն է:

— Դէ մի քաղաք տուր, ասեմ:

— Երևանը քեզ:

— Զեմ ուզում Երևանը:

— Ճոշին քեզ:

— Ճոշին էլ չեմ ուզում:

— Ալքուանդրապօլ նուխի, Բարու,  
Նախիջևան:

— Զեմ ուզում, չեմ ուզում, չեմ ուզում:  
Բա ո՞րը կուզես, Օհան:

— Թիֆլիզը:

է՞հ, քեզ լինի, դէ ասա:

— Դեռ ականջ դիր: Ուտեմ խմեմ, Թիֆ-

լիդ, հազնեմ մաշեմ, Թիֆլիդ: Ես մի քահ-  
լան ձիու վրայ նստեմ, դու մի լղար ջորու  
վրայ: Ես ուտեմ մածուն ու կաթ, դու ու-  
տես բորբոսնած ճաթ:

— Բաւական է, դէ ասա:

— Ասեմ. այն է, որ վրան կանգնում ենք  
ու ասում. «Կօրա, կօրա, պապոնց տուն.  
կօրա, կօրա, պապոնց տուն»:

Համացայ, կրիան է:

Հիմա դուք ասացէք, ինչ հանելուկներ դիտէք:



### Բ ա ռ ա խ ա ղ

Պօղոսն ու Պետրոսը բառախաղի էինստալիսոր  
Պօղոսը վարժւած էր, իոկ Պետրոսը նոր էր սովորում:

Ահա թէ ինչպէս էին խաղում.

Պօղոս. Պետրոս, ասա—տունը:

Պետրոս. Տունը:

Պօղոս. Քեզ կծի շունը:

Պօղոս. Ասա—դուրը:

Պետրոս. Դուրը:

Պօղոս. Ընկնիս ջուրը:

Պօղոս. Ասա—պաս:

Պետրոս. Պաս:

Պօղոս. Ուտես թանէ սպաս:

Պետրոս. Էլ չեմ ասում. հիմա ես կըհարցնեմ քեզ:

Պօղոս. Լաւ, հարցրու:

Պետրոս. Ասա—ծիտ:

Պօղոս. Ծիտ:

Պետրոս. Ուտես մախոխ:

Պօղոս. Այդ չեղաւ, Պետրոս, Ես ասում եմ ծիտ, դու  
ասում ես մախոխ. այդ ինչպէս կարելի է. տես-  
նում ես՝ նման չեն: Դեռ սպասիր, Էլի ես կը-  
հարցնեմ—Ասա—ծիտ է:

Պետրոս. Ծիտ է:

Պօղոս. Պետրոսն անմիտ է:

Պետրոս. Է՛հ, Էլ չեմ ասիլ. Ես անմիտ չեմ:

Պօղոս. Լաւ, շարունակենք, Էլ այդպէս չեմ ասիլ:  
Ասա—հաւ է:

Պետրոս. Հաւ է:

Պօղոս. Պետրոսը լաւ է:

Պօղոս. Ասա՞—սանձ:

Պետրոս. Սանձ:

Պօղոս, Պետրոսն ուտի տանձ, առորօք առ նորօք

Պետրոս. Հիմա ես կը հարցնեմ, Ասա՞—սամի՞ ի ցարօք

Պօղոս. Սամի:

Պետրոս. Ճաքարը ծամի:

Պետրոս Ասա՞—հաց:

Պօղոս. Հաց:

Պետրոս. Մի բիշ կաց:

Պօղոս. Է՛հ, բաւական է, դու լաւերը շես իմանում:

### Ծառերի գանգատը

Մեր տրւած փայտից կրակ են անում,  
տուն տաքացնում, թոնիրը վառում, կերա-  
կուր եփում, փափուկ հաց թխում, ուտում  
կշտանում, բայց մեզ չեն յիշում, մեզ չեն  
պահպանում. այլ անգութ կերպով մեզ կո-  
տորում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Մեր գերաններից շինում են տներ, գո-  
մեր, մարազներ, ժամեր ու վանքեր, մեր  
տախտակներից յատակ, առաստաղ, աթոռ,  
պահարան, սեղան, նստարան, դուռ ու պա-  
տոհան և այլ շատ տեսակ կահ ու կարա-

սիք: Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահ-  
պանում, այլ անգութ կերպով մեզ կոտո-  
րում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Մեր գերաններից ու տախտակներից կա-  
մուրջ են շինում՝ դետերով անցնում. Բայ-  
լեր են շինում՝ ամեն ինչ կրում. գութան  
են շինում՝ հողերը հերկում. լուծ, սամի շի-  
նում՝ եղ, գոմէշ լծում. օրօրոց շինում՝ ման-  
կիկ օրօրում. քանոն են շինում՝ տետրակ-  
ներ տողում. նաւեր են շինում՝ ծովի մէջ  
լողում: Բայց մեզ չեն յիշում, մեզ չեն պահ-  
պանում, այլ անգութ կերպով մեզ կոտո-  
րում են, մեզ փչացնում, ոչնչացնում:

Ո՞վ չի տանձ կերել կամ կարմիր խըն-  
ձոր. նուռ ու սերկեիլ, կեռաս ու սալոր.  
դեղձ կարմրաթուշիկ, ծիրան անուշիկ: Հա-  
պա խաղողը... և քանի՛ տեսակ. կանաչ ու  
կարմիր, թուխ-թուխ ու սպիտակ. և այդ  
ամենը մարդիկն են ուտում: Բայց մեզ չեն  
յիշում, մեզ չեն պահպանում:

Խելօք մանուկներ, դուք որ մեծանաք.  
մեզ խնայեցէք, մեզ պահպանեցէք և ձեր

հանդերում, ձեր պարտէզներում՝ ծառեր  
տնկեցէք:

Ուսումնաբան.

Դաշտը սիրուն է դալար բոյսերով  
եւ անուշահոտ գոյն-գոյն ծաղկներով:  
Ուսումնաբանը նոյնքան սիրուն է  
իր ուշիմ, խելօք, ժիր մանուկներով:  
Սիրուն է ծառը կահաչ ճղներով,  
Փունչ-փունչ կախուտած իր պտուղներով.  
Ուսումնաբանը նոյնքան սիրուն է  
իր առաքինի, խելօք սաներով:  
Աստւած, պահպանիր զու չառ օրերով  
Մեր անդաստանը իր մշակներով:  
Եւ մենք նորանում զուգւինք, զարգարւինք  
Գեղեցիկ ուսման գոյն-գոյն փունչերով:

Ծիծեռնակ

Խեղճ ծիծեռնակը ամբողջ ցերեկը չի  
հանգստանում, այլ միշտ թուչելով, դէս դէն  
ընկնելով նիւթ է հաւաքում:

Նիւթ է հաւաքում—խոտ ու կաւ կրում,  
իր բունը շինում, բմբուլով լցնում, լաւ  
փափկացնում ու մէջը մտնում:


Մտնում է մէջը, երեք ձու ածում և  
երեք շաբաթ վրան թուխս նատում, ձա-  
գուկներ հանում:

Փափիկ ձագերը դուրս եկան թէ չէ,  
մայրը թուչում է, դէս ու դէն ընկնում, մժեղ-  
ներ բերում, նրանց կերակրում:

Մի քիչ ժամանակ որ անց է կենում,  
սիրուն ձագերը թևաւորում են, բնից դուրս  
թուչում և իրանց մօր հետ ճանապարհ  
ընկնում, լայն-լայն դաշտերի, խոր-խոր ձո-  
րերի, մութ անտառների, բարձր սարերի,  
կապոյտ ծովերի վրայից անցնում, հեռու-  
տեղ գնում:

Զմեռն անցնում է, զարունը մտնում,  
մեր ծիծեռնակը էլի գալիս է, իր բունը  
զտնում, ճշում, ծըլւըլում, քանդածը շրտ-  
կում, կարկատում, շինում նոր ձեր ա-  
ծում, նոր ձագեր հանում, պահում, մեծա-  
ցնում, աշնան ժամանակ, առաջւայ նման,  
ճանապարհ ընկնում,—լայն-լայն դաշտերի  
խոր-խոր ձորերի, մութ անտառների, բարձր  
սարերի, կապոյտ ծովերի վրայից անցնում,  
հեռու տեղ գնում:

Երդեռնակ, ծիծեռնակ, զու զարնան սիլուն թռչնակ,  
Դէպի ուր, ինձ ասա, թռչում ես այգալէտարագ.  
Այս, թռիր ծիծեռնակ, ծնած տեղս՝ Աշտարակ.  
Անդ շինիք քո բունը—հայրենի կտութի տակ:  
Ունդ հնորու ալեռը հայր ունիմ սպաւոր,  
Որ միակ իւր որդուն սպասում է օրէցօր:  
Երբ տեսնես զու նորան, ինձնից շատ բարե պրա,  
Ասա՝ թող նստի լայ իւր անբախտ որդու վրայ:  
Դու պատմիր, թէ ինչպէս աստ անտէր ու խեղճ եմ ես.  
Միշտ լալով, ողբալով. կեանքս մաշել եղել կէս:  
Ինձ համար ցերեկը մութ է շրջում արեգը:  
Դիշերը թաց աչքիս բունը մօտ չի գալիս:  
Շուտով սառ հողի տակ կըպարկեմ այստեղ մենակ.  
Թողնելով հօրս սրտում ցաւալի յիշատակ:  
Դէհ, սիրուն ծիծեռնակ, հեռացիր, զնա արագ  
Դէպի չայոց աշխարհը, ծնած տեղս՝ Աշտարակ:



**Մ Ե Պ Ո Ւ Ն Ե Մ Ա Ր Պ Պ Լ.** ամ—  
րան զու փաց այս զիմ պիտ սինդր ըրագ—  
— Մեղուն մէկ անդամ հարցըրեց իր տիրոջը:  
— Քո կենդանիներից ո՞րն է ամենից  
օգտակարը:

— Գիտեմ, զու երեխ կարծում ես, թէ  
ամենից օգտակարը զու ես, բայց սխալ-  
ում ես, պատասխանեց տէրը:

— Ի՞նչպէս, տէր, ո՞րն է այն կենդանին,  
որ ինձանից աւելի օգտակար է:

— Ոչխարը:

— Այդ հաշիւ չէ, տէր. ոչխարը իմ հա-  
սակակիցս չէ: Նա մի ահազին կենդանի է,  
իսկ ես մի միջատ եմ: Դու պէտք է ինձ իմ  
ընկերների հետ համեմատես:

Ճատ բարի: Ճերամը քեզ պէս փոքր է,  
բայց քեզանից շատ օգուտ է տալիս:

— Ճերամը ո՞րն է:

Ճերամն այն իմաստուն որդն է, որ  
մեզ համար աննման ընքոյշ մետաքս է շինում:


Հա, իմացայ. Այդ այն շատակեր ճի-  
ճուն չէ, որ անդազար կերակրում էք թը-  
թան տերևներով:

— Նա ինքն է.

— Բայց գիտե՞ս, տէր, նրա չափ որ մեզ  
էլ կերակրէր, մենք մեղրի տեղ ուսկի կը-  
շինենք ձեզ համար. Դուք ոչ մի կենդանի  
չունիք, որ իր կերակուրը մեզ նման ինքը,  
լինի շինելիս և ուրիշներին էլ բաժին լինի  
տալիս։ Այնպէս չէ, պարօն։

— Այո, այդ կողմանէ դու ուղիղ ես.  
մենք դէսի ձեզ շատ ապերախտ ենք, որով-  
հետև բոլորովին անխնամ ենք թողնում  
ձեզ. . .

Մեղուն ուրախացաւ տիրոջ պատասխա-  
նիցը և թռաւ նատեց վարդենու վրայ.



զանա՞ այս և Մեղուն ազ զմանիսան ա-  
նոնց չ ճակատ ած Աւայնի այսի քվառակա-  
զարանց չաղկեցաւ տըեզակը, և զեւյսի  
չաղկեցաւ մանուշակը. յանուան  
Մեղուն թողեց իր փեթակը  
Տըղտրզալով, տըղտրզալով։  
Մեղուն թռաւ ծաղկէ ծաղիկ,  
Մեղը առաւ քաղցր անուշիկ,  
Մոմը տարաւ հոտոտ լուսիկ,  
Պլղպլղպալով, պլղպլղպալով։  
Անուշ մեղը մանը տըղոց,  
Գեղին մոմը՝ ամեն արբոց,  
Իսկ շարերին կըճ ու խայթոց,  
Կըսկըծալով, կըսկըծալով։

Կենդանիների վէճը.

Եզր, Կովը և Ճոնը վիճում էին մի-  
մեանց հետ և ամեն մինը սննդում էր, թէ  
մեր տէրը ամենից շատ ինձ է սիրում։

— Ի հարկէ, նա ինձ ամենքիցդ շատ է  
սիրում, ասում է եզր, և գիտէք ինչու հա-  
մար։ Նրա համար, որ ես եմ նրա արօրն

— 60 —

ու տափանը քաշում, ես եմ նրա համար անտառից փայտ բերում: Նա ինձ է լծում սայլումը և իր ցարենը տանում ջաղաց, այնտեղ ալիւր շինում, յետոյ էլի ես եմ տանում քաղաք, ուր նա ծախում է այդ ալիւրը և իր տան համար առուտուր անում, երեխանց համար հազնելիք առնում: Ուրեմն, դուք ինչ էք կարծում, ես որ չըլինէի, նա ինչպէս կարող էր ապրել:

—Այդ ճշմարիտ ես ասում, ասաց Կովը: Բայց մեր տէրն ինձ ամենքիցդ աւելի որ սիրում է, այդ նրա համար է, որ նա իմանում է, թէ քեզ նման աշխատասէր ու ժրաշան Եղնուկին ես եմ պահել մեծացրել:

Այս մէկ: Մէկ էլ որ նրա բոլոր գերզաստանն իմ կաթովս եմ պահում: Այն մածունն ու կարագը, այն սերն ու կաթը, այն եղն ու պանիրը, այն տաք-տաք թանէսպասը, որ ամեն օր խըպշտում են, ում տըւածն է: Տեսնում էք ուրեմն, որ եթէ ես չըլինիմ, բոլորը քաղցած կըկոտորւին:

—Դու էլ ես ճշմարիտ ասում, սիրուն Կովիկ, սկսեց Ճունը: Ո՞վ կարող է ուրա-

նալ քո լաւութիւնը: Ճատ անգամ ես ինքս էլ եմ մասնակից լինում քո տըւած անուշ թանին: Մեր տանտիկինն ամեն ինոցի հարելիս թանիցն ինձ բաժին է տալիս: Ով որ քո լաւութիւնն ուրանայ, երկու աչքով կուրանայ: Ես շատ երախտագիտ եմ, ոչ ոքի լաւութիւն չեմ կարող ուրանալ: Բայց գիտէք ինչ կայ: Դուք մի նեղանաք, որ մեր տէրն ինձ ամենքիցդ էլ շատ է սիրում: Դրա համար մեծ պատճառ կայ և ահա ասեմ, թէ ինչ է զրա պատճառը. . .

Եւ Ճունն սկսեց մէկ-մէկ հաշւել, թէ ինքն ինչ ու ինչ է անում:

Ասած է շունը որ հաշել սկսի, էլ չի դադարիլ: Այնքան հաշեց Եղան ու Կովի հետ, որ տէրն իմացաւ, գնաց նրանց մօտ, շան լեզւիցն աղատեց, ասելով. “Թողի տուր զրանց, Բողար, դու չգիտես, որ ամենքդ էլ ինձ հարկաւոր էք. ոչ մէկդ միասի արածը չէք կարող անել. այդ պատճառով ես ձեզ ամենքիդ էլ սիրում եմ, դոք էլ սիրեցէք միմեանց:

սզնի ու նարնա սահ զարդարութեան ոգ յան  
շառնա նուց կո ըստ մասնա նու ու ու  
առ պատու մենա մասնա զարդարութեան ոգ յան  
Զիւն էր պալիս փաթիլ-փաթիլ. Ե սկզբ  
Հետն էլ անձրես կաթիլ-կաթիլ,  
Այդ միջոցին մի պառաւ կին  
Հորթ էր փնտրում դաշտի միջին:

Կովը եկաւ տաւարիցը,  
Կուրծք ու ծծեր կաթնով լիքը:  
,,Հորթուկս ուր է՛ նա բառանչեց,  
Խեղճ պառաւին լացացրեց.

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով  
Ողբում էին լաց ու կոծով,  
Յանկարծ լսեց մի բարակ ձայն,  
Կովն խմացաւ, որ հորթն է այն:

Կովը վազեց բառանչելով,  
Պառաւը գնաց տընքտընքալով.  
Կորած հորթը մօրը զտաւ,  
Լիք ծծերը բերանն առաւ:

Ծծեց բոլոր կաթն ու տոզեց, միայ զան  
Տանտիկնոջը բան չըթողեց, մաս վառ  
Բայց պառաւը այս անգամին մին նոր  
Միրով ներեց շար հորթուկին:



### Մեղուն և Աղաւնին

#### 1. Փոքանք.

Ժրածան Մեղուն ծաղկալից զաշտում իր  
մեղրի համար նիւթ էր հաւաքում: Արևի  
տակին շատ աշխատելով, Մեղուն շատ յոդ-  
նեց և խիստ ծարաւեց.

Նրանից մօտիկ մի փոքրիկ լիճ կար:  
Մօտեցաւ լճին, վէր եկաւ ափին, որ ըիշ

ջուր խմի, ծարաւը կոտրի, նոր ուժ ստմնայ,  
թոշի տուն գնայ: Հինց որ կոացաւ, որ ջուր  
կում անի, յանկարծ զլորւեց, ընկաւ ջրի մէջ:  
նա շատ աշխատեց, որ ցամաք դուրս գայ,  
բայց մի փոքր ալիք նրան ներս քաշեց, ա-  
փից հեռացրեց:

Այսպէս խեղճ Մեղուն ցամաքից զրկւեց,  
ջրի երեսին թեերը փռեց և յոյսը կտրած՝  
մնաց մեկնըւած:

2. Օ ԳՆՈՒԹԻՒՆ.

Որտեղից որտեղ՝ օգնութեան հասաւ մի  
շատ բարեսիրտ սիրուն Աղաւնի. Բարի Ա-  
ղաւնին մօտեցաւ լճին և նայեց տեսաւ մեր  
խեղճուկ Մեղւին՝ յուսահատ փռւած ջրի ե-  
րեսին: Խսկոյն շտապեց, մի տերև կտցեց և  
տարաւ Մեղւի առաջեր ձգեց:

Մեղուն բարձրացաւ տերեսի վրայ, խելքը  
ժողովեց, դէս ու դէն նայեց, որ տեսնի ով  
էր իր ազատողը, մահից փրկողը: Եւ տե-  
սաւ իր մօտ բարի Աղաւնուն: Չատ նայեց  
մրան և ուղեց խօսել, Աղաւնուն դովել,

շնորհակալ լինել: Բայց մեր բարեսիրտ սի-  
րուն Աղաւնին շատ լաւ իմացաւ Մեղուի  
միաքը, և ոչինչ չուզեց լսել նրանից, այլ  
թուաւ գնաց, որ ուրիշ տեղ էլ նոյն բարիքն  
անէ:

3. ԵՐԱԽՍՏԱԳԻՄՈՒԹԻՒՆ.

Մի օր մեր Մեղուն նոյն դաշտի միջին  
մի սիրուն ծաղկից նիւթ էր ժողովում և  
տղտղալով Աղաւնուն գովում: Մեղուի հան-  
գէպ, մի ծառի վրայ նստած ննջում էր  
ծանօթ Աղաւնին:


Հինց այդ ժամանակ Մեղուն նկատեց,  
որ ահա մէկ մարդ, հրացանը ձեռին, մէջքը  
կոացրած, շար օձի նման սողում սուս ու  
փուս զէպի Աղաւնին: Մեղուն հասկացաւ,  
որ դա չար մարդ է, անկութ որսորդ է, ու-  
զում է սպանել անմեղ թոշունին, իր բարե-  
րարին: Եւ ճշմարիտ որ այդ էր այն մար-  
դու չար նպատակը:

Որսորդը չոքեց, տեղը պնդացրեց և հր-  
բացանը երեսին բանեց: Հինց մատը դրեց

կայծառի ոտքին և ուզեց քաշել, գործը  
վերջացնել, այդ իսկ բոսէին կայծակի  
նման Մեղուն վրայ հասաւ և չար որսորդի  
ձեռքն այսպէս խայթեց, որ նա վեր ցատ-  
կեց: Նրա հրացանը նշանից շեղւեց և իր  
թնդիմով անմեղ Աղաւնուն քնից զարթեցրեց  
ու տեղից թոցրեց:

Այսպէս մեր Մեղուն իր բարերարին  
վերահաս մահից փրկեց ազատեց:

Ինչ որ ցանես, այն կը հանձես.  
Արած լաւութիւնը չի կորչիլ:



### Փոքրիկ գառը.

Մի փոքրիկ գառ, ձիմի նման մաքուք սպիտակ,  
Մի օր գնաց մօր հետ զաշար, որ արածի:  
Դաշտ որ հասաւ, սկսեց թռչել քարերի տակ,  
Էլ չէր ուզում փոքր միջոց հանդիսաւ նստի.  
Այս ու այն կողմ վազվելով չափ էր ընկնում,

Թէ քար, թէ ժայռ, թէ փոս, թէ ձոր չէր հարցնում:  
— Որդեակ, հանդարտ, ձայն էր տալիս նրա մայրը.  
Զգնյշ կացիր, որդեակ, լսիր իմ խրատը:  
Բայց գառնուկը մօր ասածին ուշ չի գարձնում,  
Իր խաղալի ու վազվելն է շարունակում:  
Եւ վերջապէս երբ մօր խօսքին ականջ չարաւ,  
Սարի գլխին իր գժութեան պատիժն առաւ,  
Մի մեծ քար կար այնտեղ ընկած. Նրա ծայրում  
Մեր գառնուկը թռչկոտալով խաղ էր անում,  
Մէկ էլ յանկարծ նրա վրայից զլորւեցաւ,  
Ոտի մէկը տակովն էլաւ, կոտրւեցաւ:

### Մեղուն և հաւը.

Հաւը Մեղուի վրայ ծիծաղելով՝ ասաց  
մէկ անգամ.

— Ի՞նչ անշնորք ճանճ ես զու, ամբողջ  
օրը ծաղկից ծաղկիկ ես թռչկոտում և ոչ  
մի բանի պէտք չես զալիս:

— Իսկ զու, Հաւիկ մարիկ, ի՞նչ ես շի-  
նում, հարցրեց Մեղուն.

— Միթէ չըդիտես, թէ ի՞նչ եմ շինում  
ես: Քեզ նման պարապ-սարապ չեմ տըդ-  
տղում: Ես օրը մէկ ձու եմ ածում, մէկ  
ձու, զիտես մէկ ձուն քանիսն է:

Պ Ա Վ Կ Ն Ե Ր .

Վարդ ծաղկին լինինք նման  
եւ օրինակ հեզութեան.  
Թող վարդը հանգստանայ  
Մեր մատաղ սրտի վրայ:

Աղնիւ սիրուն մանուշակ  
Համեստութեան օրինակ,  
Տուր մեղ ծաղիկ գեղեցիկ,  
Քո քնքուշ հոտ անուշիկ:

Օրինակ անմեղութեան,  
Գաշտի սիրուն դու շուշան,  
Եկ, զարդ եղիք մեր սլարին,  
Եկ, միացիք մեր երգին:

Կանաչ խոտը դաշտերի  
Մեր սրտին է սիրելի.  
Թող ոստը կաղնի ծառին  
Պսակ լինի մեր զլխին:

Սիրուն կանաչ պսակին  
Թող միանանք, բարեկամք,  
Եւ յոյսերս անբաժան  
Մնան մեղնից յաւիտեան:

Գիտեմ, գիտեմ, հասկացայ: Բայց ես  
մինչև հիմա կարծել եմ, թէ դու օրը հա-  
րիւր ձու ես ածում:

— Ի՞նչպէս կարելի է օրը հարիւր ձու  
ածել, անխելք մեղու:

— Հապա եթէ քո ածածըլդ ընդամենը  
մի ձու է, էլ ինչու ես հարիւր անգամ  
կըրկըչում, թէ հայ, հարայ, լսեցէք, իմա-  
ցէք, որ ես ձու եմ ածել: Իմ կարծիքով  
այդքան կրկալուն մի ձուն շատ քիչ է:  
Այնպէս չէ, իմաստուն չաւիկ մարիկ:

— Բայց դու ի՞նչ ես շինում, դու, որ  
իմ մի ձուն քիչ ես համարում:

— Ես ինչ որ շինում եմ, քեզ պէս կըր-  
կըչալով չեմ յայտնում ուրիշներին: Ես, զլուխս  
քաշ զցած, մեղք եմ շինում: Գիտես ինչ է  
մեղը: Գտ հաւի կերակուր չէ, քո խելքի  
բանը չէ, չաւիկ մարիկ:



### Մանուշակ

Կապոյտ գլխով, կանաչ ստով  
Ես ծաղիկ եմ անուշ հոտով.  
Թէ տունկս փոքրիկ է՝ ցած,  
Ըստներում միշտ թաք կացած,  
Բայց իմ փունջս ամենի տան՝  
Թէ աղքատի, թէ մեծատան,  
Իբրև զարնան առաջին զարդ,  
Կարէ տեսնել ամենայն մարդ.  
Ես եմ սիրուն գարնան գուշակ,  
Իմ անունըս է մանուշակ.

---

### Ոսկի և երկաթ.

Ոսկին Երկաթին արհամարելով, ասաց  
մէկ անգամ. — Երանի գիտենամ, զու ինչա-  
ցու ես, որ մետաղների կարգն ես ընկել.  
Քո սկ ու ժանգոտ երեսովդ մարգու վրայ  
զգանք ես բերում: Նայիր ինձ վրայ.  
տես՝ ինչպէս զեղեցիկ եմ փայլում, ինչպէս  
շողշողում: Նայիր մեր սիրուն օրիորդների  
ու հարաների ականջներին ու մատներին,  
զու կրտեսնես իմ փառքն ու պատիւր.  
Նայիր նրանց ճակատների շարքերին, զու

կրտեսնես իմ փայլն ու զեղեցկութիւնը.  
Նայիր նրանց պարանոցներին ու կուրծքերին,  
զու կրտեսնես իմ մանեակների ու շղթա-  
ների նրբութիւնը: Զեմ հաշում ապարան-  
ջանները, գնդասեղները. գիտեմ որ զու  
այնքան կոշտ ու կոպիտ ես, որ այդպէս  
քնքուշ բաների մասին ոչ ճաշակ ունիս, ոչ  
հասկացողութիւն:

**Երկաթը պատասխանեց Ոսկուն:**

— Ես չեմ ուրանում, Ոսկի աղա, որ  
զու զեղեցիկ ես, ամեն բանի զարդն ու  
զարդարանքը զու ես, գինը շատ բարձր է,  
աղքատի բան չես. բայց ինչու ես չափիցդ  
զուրս զուսպանում: Քո սիրուն օղակներդ ոչ  
ականջի լսելիքն են աւելացնում, ոչ մատնե-  
րին ու կուներին զօրութիւն ու ժրութիւն  
տալիս: Ճակատների փայլուն չարքերը գըր-  
խին խելք չեն տալիս, ոչ կուրծքերի նուրբ  
մանեակները սրտին զութ ու խնամք:

Ի՞նչ ասեմ մեր օրիորդներին, որ քեզ  
այդշափ պատիւ են տալիս, քեզ համար հալ-  
ւում, մաշում ու բարակացաւ ընկնում: Իմ  
մի փոքրիկ ասեղը քո բոլոր զարդարանք-

ներից աւելի է օգուտ տալիս: Գիտե՞ս, Ոոկի աղա, իմ փոքրիկ ասեղը քանի՛ տուն է սպահում, քանի՛ որբի կերակրում: Իմ խովն ու ձեիշը ամբողջ աշխարհին հաց են տալիս:

Մարդիկ ինչ որ շինում են, կամ պէտք է կտրեն, կամ պէտք է ծեծեն, կամ պէտք է սղոցեն, կամ պէտք է խարտոցեն, կամ պէտք է կարկատեն: Իմ ուրագն ու կացինը որ շըլինին, իմ դուրն ու շաղափը, իմ սղոցն ու մուրճը, իմ կտրիչն ու խարտոցը, էլ կարող էին մարդիկ քար քարի վրայ դնել, փայտ փայտի վրա:

Ահա այդպէս սլարծենկոտ ես զու Ռուկի աղա, քո փայլից կուրացած՝ ուրիշի լաւութիւնը չես տեսնում:

### Արշակի շարադրութիւնը.

Երկար ժամանակ սպասում էի, թէ Երբ պէտք է ինձ ուսումնարան տանեն: Ուսումնարանի մօտովն անցնելիս՝ որ լսում

էի աշակերտների երգելու ձայնը, սիրտս մի ուրիշ կերպ էր զառնում, մտքումս ասում էի. ախ, Երբ կըլինի, որ ես էլ սրանց մէջը լինիմ, սրանց պէս կարդամ, սրանց պէս երգեմ, սրանց հետ խաղամ, արդեօք կարծանանամ այն օրին:

Վերջապէս փափագիս հասայ. Հայրիկս մի առաւօտ ինձ յայտնեց, թէ երկուշարթի օրը քեզ տանելու եմ ուսումնարան, և այսօր պէտք է գնամ քո ուսումնան պիտոյքներն առնեմ: Այն օրն էլ ես հաց շըկերայ շափականց ուրախութիւնից:

Երեկոյին հայրս եկաւ տուն: Ի՞նչ ասես որ չէր առել ինձ համար. — Թուղթ, թանաք, թանաքաման, զասագիրք, տեսակ-տեսակ զրչածայրեր, զրչակոթեր, զրատախտակ, քարեզրիչներ, մատիտներ, մի քառակուսի քանոն, մի սիրոն զրչահատ: Բոլորը ջոկ-ջոկ թղթերում փաթաթեցի ու դրի պահարանումս, մինչև հասաւ երկուշարթին՝ ուսումնարան գնալուս օրը:

Ն ո ր տ ա ր ի.

Ահա հասաւ նոր տարի,  
Հետը բերաւ նոր բարի.  
Մանր տըղոց ուրախ օր,  
Բարի գաւակ հօրն ու մօր:

Մանր տղայքն են ուրախ,  
Ունին կաղին, գողինաղ,  
Մալորի չոր, չամիչ, թուզ,  
Փշատ, ունաք և ընկուզ:

Մանր տղայք չըմոռնաք,  
Աշխարհումս չէք մենակ.  
Ուրիշ շատ խեղճ տղայք կան,  
Աղքատ ու անօգնական:

Նոքա հայր ու մայր չունեն.  
Սև չոր հացի կարօտ են.  
,,Աղքատներին ողորմած  
Եղէք“, կասէ ձեզ Ասուած:

—

Մ ա ն կ ա կ ա ն ի ս պ դ.

Ա. Աշակերտ

(ասում է անգործ մանկանը)  
Ով գու մանուկ ծաղկահասակ,  
Հերիք անգործ պարապ ման գաս,  
Զուր մի կորցնիր ոսկի ժամերդ,  
Թէ չէ տղէտ, բիրտ կըմնաս:

Բ. Աշակերտ

Խղճա, խղճա քո օրերին,  
Արդէն անցաւ քո ուժ տարին,  
Ինչ ես սովորել թափառելով,  
Հասկացնել ես շարն ու բարին:

Գ. Աշակերտ

Չէ որ մեղք է խղճուկ հայրըդ,  
Որ կաշխատի միշտ անդադար,  
Թէ ինչ է իւր որդին մի օր  
Դառնայ լաւ մարդ իրան համար:

Աշակերտաց խումբը

Գոնէ նայիր ու մեզ առ քեզ  
Աշխատութեան օրինակ,  
Եւ մի անգին ժամանակըդ  
Փշացընիլ շարունակ:

Եկ, Եկ, հերիք պարալ շըջես,  
Դորանից քեզ օտուտ չըվայ.  
Եկ վարժարան, կարդա մեղ հետ,  
Որ խեղճ հայրդ ուրախանայ:

Անգործ մանուկ

Ինչի՞ կըգամ ձեր վարժարան,  
Որ զուր գերի ես զառնամ,  
Ազատ, ուրախ վողոցներում  
Լաւ չէ խաղամ ու ման զամ:

Աշակերտաց խումբը

Մենք էլ երբոր բոլորովին  
Դասներս լաւ կըսերտենք,  
Այն ժամանակ ազատ ուրախ  
Խաղ կը խաղանք ու կ'երգենք:

Անգործ մանուկը

Հապա որ ձեզ վարժապետը  
Միշտ կըծեծէ, կըպատժէ,  
Միթէ այդ վատ պատժարանը  
Գալ ու նստելը կարժէ:

Խումբը

Այստեղ ոչ թէ ծհծ ու պատիժ  
Այլ ուսում են մեղ տալիս,  
Միայն ծոյլ, վատ աշակերտը  
Խախատում է ու լալիս:

Անգործ մանուկը

Հապա որ միշտ հրամանով  
Դուք կըկանզնէք, կընստէք.  
Եւ ինձ նման ուզած ըոպէն  
Ազատ ման գալ կարող չէք:

Խումբը

Ով որ չունի կարդ ու կանոն,  
Նա ասում է անկիրթ մարդ.  
Կարգ, կանոնը մանկանց համար  
Են գովական սիրուն զարդ:

Եկ, ասում ենք, Եկ վարժարան,  
Չես կշտանալ թափառելով  
Ում ուզում ես՝ գնա, հարցուք,  
Մարդ կըդառնաս ուսումով:

Անգործ մանուկը

Ես էլ կըգամ, ես էլ կըգամ,  
Էլ չեմ շըջիլ պարապ, զուր.  
Ես էլ ձեզ հետ միշտ կըկարդամ,  
Էլ չեմ ընկնիլ զոնէ զուռ:

Խումբը

Եկ մեղ մօտ, Եկ մեղ մօտ,  
Քեզ կընդունենք մեծ սիրով.  
Միասին, միասին,  
Խաղանք, խնդանք երգելով:

Բոլորը

Եկէք, եղբարք, թէի թէի տանք,  
Իրար գըկենք. ուրախանանք,  
Քանի այդպէս դեռ մանուկ ենք,  
Ուսում տոնենք, խնդանք:  
Դէհ, եղբարք, դէհ, եղբարք,  
Ուրախ երգենք ու խաղանք:  
Ոչ ոք չունի մեզի նման  
Ուրախ օրեր, զուարթ ժամեր,  
Եշակերտաց կեանքն է անհոգ,  
Միրտն է մաքուր, գործն օգտարեր:  
Դէհ, եղբարք, դէհ, եղբարք,  
Ուրախ երգենք ու խաղանք:  
Կեցցէ, կեցցէ մանուկ հասակ,  
Կեցցեն ուսում, խաղի ժամեր.  
Կեցցէ յաւետ մեր վարժարան,  
Կեցցենք և մենք, աշակերտներ:  
Պար ըոնենք ու երգենք,  
Քանի ոք իրար հետ ննք  
Տըայ լայ, լայ, լայ, լայ, լայ,  
Տըայ լայ, լայ, լայ, լայ, լայ...

---

Տ դ ա յ ո ց ա ղ օ թ ք.

Հայր մեր երկնաւոր, հայր-ամեն մարդի.  
Դու ինձ ամեն օք տաս հազար բարի,—  
Կեանք, լոյս, կերակուր, հայր ու քաղցրիկ  
մայր, մեծ ու փոքրիկ քոյր, անուշիկ եղբայր:  
Իսկ ես ինչ ունիմ, որ ինչ տամ Քեզի,  
առջերդ կընկնիմ, կենամ աղօթքի. „Ճնորհըդ  
տուր ինձ, որ ծնողներիս, ուսուցիչներիս և  
իմ մեծերիս լինիմ սիրելի, խակ Քեզ հաճելի“:

---

Ա ռ ա ւ օ տ ե ա ն ա ղ օ թ ք.

Ով տէր մեր գլխոտ,  
Դու լոյս առաւօտ,  
Ծաղիր և մեզ մօտ  
Քո լոյսդ անաղօտ:  
Թող լուսաւորւին  
Մեր միտք ու հոգին,  
Որ Քո լոյս անւան  
Լինինք վառարան:

---

Յանուն չօր և Որդւոյ և չողւոյն Սըրոյ. ամէն:

---

Հայր մեր.

Մեր Հայր, որ երկնքումն ես, սուրբ լինի  
քո անունը, զայ քո թագաւորութիւնը քո  
կամքը լինի ինչպէս երկնքումը և երկրում։  
Մեր ամենօրւայ հացը տուր մեղ այսօր.  
Թող մեղ մեր պարտքերը, ինչպէս մենք  
թողում ենք մեր պարտապաններինը։ Մեզ  
դէպի փորձութիւն մի տանիլ, այլ փրկիլ  
չարից, որովհետև քոնն է թագաւորութիւնը,  
զօրութիւնը և փառքը յաւիտեան։ ամէն։

Տէրունական աղօթք։

Հայր մեր, որ, յերկինս ես, սուրբ եղիցի  
անուն քո. եկեսցէ արքայութիւն քո, եղիցին  
կամք քո որպէս յերկինս և յերկրի. Զհաց  
մեր հանապազորդ տուր մեղ այսօր. Թող  
մեղ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք  
մերոց պարտապանաց. և մի տանիր զմեղ  
՚ի փորձութիւն. այլ փրկեա զմեղ ի չարէ.  
զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք  
յաւիտեան։ ամէն։



Ղ. ԱՂԱՅԵՄՆՅԻ ԱՃԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Աղայեմնց՝ Ռւսումն Մայրենի Լեզուի, ա, տարի 25 կ.
2.       »       Ռւսումն Մայրենի Լեզուի, բ, տարի 30 կ.
3.       »       Ռւսումն Մայրենի Լեզուի, զ, տարի 55 կ.

---

Գիրկ՝ Վъ Центральную книжную торговлю,  
Въ Тифлисъ.

2073 3204

«Ազգային գրադարան»



NL0062230

